

**ՄԱՇՏՈՑՑԱՆ ԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ  
Ուռույան Հ. Հ., Պետրոսյան Կ. Հ., Պետրոսյան Ա. Հ.,  
Սարգսյան Մ. Ս.**

Ուսումնասիրություններով հաստատված է, որ գիտակրթական համակարգի զարգացումը պայմանավորված է ազգային լեզվամտածողության մշակույթով, իսկ վերջինս խարսխվում է գրային համակարգի վրա: Շեշտելով մաշտոցյան գրային համակարգի վճռորոշ դերը Հայաստանի գիտակրթական համակարգի աննախադեպ վերելքի ապահովման գործընթացներում՝ ուրվագծվում է նախամաշտոցյան գրերի և մշակույթի առկայությունը, առանց որի անհնար է պատկերացնել ոսկեդարյան հղկված լեզվով գրական ու գիտական առաջընթացը: Աշխատանքում գիտական մտքի զարգացման ֆոնի վրա ցույց է տրվում, որ վերջինս անհրաժեշտ նախապայման է Հայաստանի գիտակրթական համակարգի իրատեսական գնահատման ու բնականոն զարգացման համար:

**Բանալի բառեր.** նախամաշտոցյան գրեր, դպրություն, Մովսես Խորենացի, Անանիա Շիրակացի, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Իմաստասեր, բնաբուժություն, բժշկագիտություն:

**Նախաբան:** Երկրի սոցիալ-տնտեսական վերելքի փուլերը, որպես կանոն, նախորդում են նմանօրինակ իրողություններով հոգևոր ոլորտում, մասնավորապես գիտակրթական համակարգի կայունությանը և հուսալիությանը: Այս առումով մաշտոցյան գրերի դարակազմիկ նշանակությունը Հայաստանում փաստարկված է դրան հաջորդող գիտամշակութային կյանքի բուռն վերելքով: Վերջինս արձարձված է մեծաթիվ ուսումնասիրություններում, որոնցով, սակայն, չի փակվում խնդրահարույց հարցերի շրջանակը: Սերունդները

պարտավոր են մշտապես օբյեկտիվորեն վերագնահատել ու վերախմաստավորել անցյալը՝ կանխորոշելու համար նրա ընթացքի ուղղությունները: Հայաստանի համար, իրավամբ, բախտորոշ էր մեսրոպյան գրերի ստեղծումը, որին հաջորդեցին դպրության հիմնադրումն ու գիտակրթական համակարգի ձևավորումը: Գրվեցին բազմաբնույթ գրական, փիլիսոփայական, բնագիտական արժեքավոր երկեր, որոնց նորովի իմաստավորումը մշտապես արդիական հնչեղություն ունի, քանի որ դա այն հենահարթակն է, որը պայմանավորում է գիտակրթական ու մշակութային առաջընթացը:

Հայ գրերի ստեղծումը նախորդել է հայոց պետականության կորստի ժամանակաշրջանին, երբ Հայաստանը կոլախնձոր էր դարձել Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև, որն սպառնում էր ոչ միայն հայ ժողովրդի միասնությանը, այլև ֆիզիկական գոյությանը: Ուստի պատմական անհրաժեշտություն էր հոգևոր անկախություն ձեռք բերելու, ազգային դիմագիծը պահպանելու խնդիրը, որը կարող էր իրականացվել գիտակրթական համակարգ ու ազգային մշակույթ ստեղծելու շնորհիվ: Այս առումով նշանակալից էր Մեսրոպ Մաշտոցի պատմական սխրանքը, ով հայ գրերի գյուտից հետո անմիջապես ձեռնամուխ եղավ երկրի տարբեր գավառներում պետական հովանավորչությանը կրթական օջախների հիմնադրման գործին: Մենք հարկ չենք համարում հանգամանալի անդրադառնալ նախամաշտոցյան գրերի ու մշակույթի գոյության խնդրին, բայց գիտության համար շահեկան չենք համարում մեծանուն հայագետների ծանրակշիռ ուսումնասիրություններով շղթայել մեր միտքը, քանի որ դրանցում տեղ են գտել որոշ վիճահարույց դրույթներ: Այդօրինակ երկրնտրանք է հարուցում մաշտոցագիտության այն էջը, որը վերաբերում է Կորյունի գովեստներին Վասակ Սյունի «ուխտադրուժ» իշխանին [6], որը բավարար հիմք է հանդիսացել ընդունելու, որ «Վարք Մաշտոցի» երկը գրվել է մինչև 451 թվականը, որն այլ բան չէ, քան մտքի կաշկանդում անվանի հեղինակություններով: Հարց է առաջանում՝ եթե իրոք Վասակ Սյունին ուխտադրուժ իշխան էր, ապա ինչո՞ւ «Վարք Մաշտոցի» հետագա ընդօրինակություններում այդ միտքը չի հանվել կամ վերափոխվել, մի բան, որ սովորական գործելակերպ էր հայ պատմագիտության պրակտիկայում: Մենք հակված ենք խնդրի լուծումը տեսնել, մասնավորաբար, Նիկողայոս Ադոնցի և Համլետ Դավթյանի վերլուծությունների ենթատեքստում:

Մ. Խորենացին իր պատմության մեջ նախատինքի խոսքեր է ուղղում նախորդներին գրավոր հիշատակություններ չթողնելու համար, որը որոշ հայագետներ միակողմանիորեն են մեկնաբանել՝ հանգեցնելով նախամաշտոցյան գրերի չգոյության ևս մեկ վկայության: Այնինչ դա վկայում է այն մասին, որ Հայաստանում որոշակի գրոց լեզու օգտագործվել է, որով կարելի էր հիշատակություններ թողնել, և, ինչպես Խորենացին է նշում, «վաղընջուց գտեալ» գրերը: Եվ այստեղ չպետք է շրջանցել դանիելյան գրերը որպես մեհենական մշակույթից փրկված պատահիկ ընդունելու վարկածը, թեև Կորյունը հայտնում է, որ դրանք քաղված են այլ դպրությունից: Մակայն, ինչպես նշում է Նիկողայոս Ադոնցը, Կորյունի ոչ բոլոր գնահատականները կարելի է անվերապահորեն ընդունել, որոնք ավելի շատ ջատագովություն են հիշեցնում, քան վարքագրություն [7]: Մինչմեսրոպյան դպրության գոյության օգտին է խոսում Ագաթագեղոսի այն վկայությունը, որ հայերը հեթանոսական շրջանում ունեցել են դպրության աստված (Տիր), մի բան, որ անհնար է պատկերացնել առանց իրական գիր ու դպրություն ունենալու [1]: Ամենից առաջ անիրական է թվում ինչպես այն, որ գրերի գյուտից անմիջապես հետո, առանց թարգմանական ավանդույթների, կայացել է աստվածաշնչյան «թագուհի թարգմանչացը», այնպես էլ պատմական կարճ ժամանակահատվածում «Եղծ աղանդոցի» կարգի բարձրարվեստ գործերի ստեղծումը:

Հատկանշական է, որ նախամաշտոցյան և նախաքրիստոնեական գրական մշակույթի գոյության խնդրում ուսումնասիրողները բաժանվել են երկու բանակի: Մենք հիմնավոր ենք համարում Էդուարդ Ադայանի ուսումնասիրությունը, որն ուղղակի բացառում է օտարատառ հայալեզու մատենագիտության հնարավորության վարկածը [3]: Այստեղ կարևոր է շեշտել, որ, համաձայն 19-րդ դարի մտածող Ալեքսանդր Պոտեբնյայի հետազոտությունների, երեխան պետք է աշխարհը ճանաչի մայրենի լեզվով ստեղծված գրական արժեքների միջոցով, ավելին՝ վաղ տարիքում երեխայի մեջ օտար լեզուների սերմանումը բացասաբար է անդրադառնում նրա երևակայության և առհասարակ հոգեկերտվածքի վրա [13]:

Վերոնշյալ խնդրահարույց անորոշությունների վրա լույս են սփռում Արտակ Մովսիսյանի հիմնարար ուսումնասիրությունները, որոնցում բացահայտվել են նախամաշտոցյան գրին ու մշակույթին վերաբերող բազմաթիվ կնճռոտ հիմնահարցեր: Այստեղ արձանագրությունների լուսանկարներով և ուսումնասիրողների ձևակեր-

պումներով փաստարկված են մատենագրական տեղեկություններ նախամաշտոցյան գրերի և դպրության մասին [8,9]:

Այսօր պատմական իրողություններ են Քրիստոսից դարեր առաջ ուրարտական սեպագիր արձանագրությունները և ստեղծված հարուստ մշակույթը, որը նախադրյալներ է հանդիսացել Հայաստանում գիտակրթական համակարգի ձևավորման համար: Հայտնի է, որ ուրարտացիները, Ք. ա. 9-րդ դարում ասորաբաբելականին ընդօրինակելով, հիերոգլիֆներից անցան սեպագրերին: Ուրարտական արձանագրությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այստեղ կիրառվել է թվարկության տասնորդական դիրքային համակարգը, որի ազդեցությունը նկատվում է հետագա դարերի հայոց թվաբանական դասագրքերում:

Հայաստանում հասունացել էր ձևավորված բնագիտական և բնափիլիսոփայական պատկերացումները սեփական՝ զարգացման բարձր աստիճանի հասած լեզվով արտահայտելու, ինչպես նաև հարևան ժողովուրդների ստեղծած մշակույթին հաղորդակցվելու պահանջը՝ չխոսելով արդեն այն մասին, որ եկեղեցական արարողություններին ասորերեն չիմացող ժողովուրդն անհաղորդ էր մնում: Բացի այդ, Հայաստանը, հանդիսանալով ուրարտական մշակույթի ժառանգորդը և գտնվելով ժամանակի քաղաքակրթության խաչմերուկում, չէր կարող սահմանափակվել այլալեզու գրերով մշակույթ ստեղծելու նվաստացուցիչ հեռանկարով:

Հայաստանում գիտակրթական համակարգի զարգացման համար նպաստավոր պայմաններ էին ստեղծում 5-րդ դարի մտածողների կողմից Աստվածաշնչի համակողմանի ուսումնասիրություններով պայմանավորված լեզվամտածողության ձևավորումը մի կողմից, և հելլենիստական ժամանակաշրջանի հզոր մշակույթի ազդեցությունը՝ մյուս կողմից: Մաշտոցն ինքն էլ, հունական կրթություն ստանալով, մեծապես կրել է հունական ազդեցություններ, և, ինչպես հաստատում է նրան վերագրվող «Յաճախապատում ճառք» աշխատությունը, նրան հոգեհարազատ է օբյեկտիվ իդեալիստական (պլատոնական) գաղափարախոսությունը: Կարելի է ասել, որ բնագիտական առաջին հայագիր գաղափարները պատկանում են հենց իրեն՝ հայոց գրերը ստեղծողին, որովհետև հայ առաջին պատմիչների աշխատություններում բերված թվականները վկայում են թվարկության այբբենական համակարգի գոյության մասին: Անվերապահորեն Մաշտոցին պետք է վերագրել բացառապես բոլոր 36 տառերի

օգտագործումը թվարկության համակարգում: Փաստորեն, Մաշտոցին մտահոգել է ստեղծված տառերի համապատասխանությունը ոչ միայն հայոց լեզվի հնչյունային օրինաչափություններին, այլև թվարկության համակարգին, մի խնդիր, որ լուծվել է մաթեմատիկական ճշգրտությամբ: Մա մեզ դարձյալ բերում է նույն ելակետային դրությանը. մինչև մաշտոցյան գրերի ստեղծումը Հայաստանում կիրառվել է թվարկության այբբենական համակարգ, և խնդրո առարկա հիմահարցի լուծման ճանապարհին չպետք է հրաժարվել այն ենթադրությունից, որ դրանց հիմքում կարող էին ընկած լինել, օրինակ, դանիելյան ոչ կատարյալ գրերը:

Գիտակրթական համակարգի զարգացումը բնականոն ընթացք է ստանում հայ գրերի գյուտի շնորհիվ. թարգմանվում, ընդօրինակվում և տարածվում են մեծաթիվ գրքեր ու ձեռագրեր, որոնք արգելված էին Բյուզանդիայում: Հատկանշական է, որ հին հույները կրթական գործընթացներում առանցքային նշանակություն էին տալիս մաթեմատիկային, որը թարգմանաբար նշանակում է գիտություն [7]:

Հայ իրականության մեջ առաջին անգամ կրթագիտական հարցեր են քննարկվել, և բնագրային թարգմանություններ են կատարել Մաշտոցի աշակերտները, իսկ 5-6 դարի փիլիսոփա Դավիթ Անհաղթի «Գիրք սահմանաց» գրքի ժե գլխում մաթեմատիկային վերաբերող ուշագրավ ձևակերպումներ են արտահայտված [5]:

7-րդ դարում Հայաստանում բուռն վերելք է ապրում եկեղեցաշինությունը, որը հնարավոր էր միայն ճշտորեն նախագծված հատակագծի և թվաբանական ու երկրաչափական հաշվարկների հիման վրա: Մա վկայում է այն մասին, որ հայերն ունեցել են մաթեմատիկական խոր գիտելիքներ, և միանգամայն օրինաչափ է, որ գիտական մտքի զարգացումը իր արտացոլումն է գտնում Անանիա Շիրակացու տիեզերագիտական, տոմարական, չափական, թվաբանական աշխատություններում: Շիրակացուց առաջ բնագիտական հարցերը ներկայացվում էին այլ գիտությունների, գլխավորապես փիլիսոփայության հետ շաղկապված: Նա առաջին խոշոր մտածողն էր, որը բնական գիտությունները դիտարկում է որպես առանձին հետազոտության առարկաներ՝ կարևորելով դրանք գիտական հիմքերի վրա դնելու անհրաժեշտությունը: Բնության ըմբռնման հարցում թեև ընդօրինակում է հույն բնափիլիսոփաներին, սակայն զարգացնելով հասնում է այնպիսի ընդհանրացումների, որոնք համաշխարհային գիտական միտքը նվաճում է նրանից ավելի քան տասը դար անց: Դա

վերաբերում է բնության զարգացման պատճառները բնության մեջ փնտրելու նրա դիրքորոշմանը և հանճարեղ մեկնաբանումներին, որոնք հանգեցնում են հակադրությունների պայքարի և միասնության օրենքի բացահայտմանը:

Ստեղծելով իր իմաստասիրական համակարգը՝ Շիրակացին Սյունյաց, Մաքենացոց, Արշակունյաց (Երասխաձորի) դպրոցներին զուգընթաց հիմնեց իր ժամանակի ամենափայլուն դպրոցը: Այս առումով ինքնատիպությամբ առանձնանում է նրա թվաբանության դասագիրքը, որի առանձին հատվածներ այսօր էլ կարող են զարդարել ներկայիս դպրոցական դասագրքերը:

Հարկ ենք համարում նշել, որ Շիրակացու գիտական ժառանգությունն այնքան համակողմանի ու արժեքավոր է, որ բոլորովին կարիք չունի արհեստածին հավելումների: Կարծում ենք, որ նրա մաթեմատիկական ժառանգությունը իրատեսորեն արժևորելու համար գիտության համար շահեկան կլինեք դրանք համադրել ոչ թե 14-րդ դարում իր իսկ ազդեցությամբ հաշվողական արվեստի վերաբերյալ աշխատություններ հեղինակած Նիկողայոս Արտավազդի, այլ դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում ցայսօր արդիականությունը չկորցրած Արքիմեդի, Էվկլիդեսի, Դիոֆանտեսի, Արիստարքոս Սամոսացու և նրանց մեծ ժամանակակիցների հետ [2,9,10]:

Անանիա Շիրակացու ավանդների արժանավոր հետևորդը Գրիգոր Մագիստրոսն է, որի «Թղթերից» մեզ հասած պատառիկները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու միջնադարի այդ խոշոր մտածողի գիտական ընդգրկումների լայն շրջանակի մասին: Բնագիտությանը մատուցած մեծ ծառայություն պետք է համարել այն, որ նա ըստ արժանվույն գնահատեց և մոռացությունից փրկեց Ա. Շիրակացու բնագիտական աշխատությունները՝ դարձնելով հայկական դպրոցներում և ճեմարաններում մաթեմատիկայի դասավանդման հիմքը: Գ. Մագիստրոսի բնագիտական խոր ըմբռնումների մասին է վկայում այն հանգամանքը, որ ձեռնամուխ է լինում մաթեմատիկայի ամենակոթողային աշխատության՝ Էվկլիդեսի «Հիմունքների» բնագրային թարգմանությանը, որը Եվրոպայում հայտնվում է 450 տարի անց: Գրիգոր Մագիստրոսը լուսավորչի համբավ է ունեցել, Անիում հիմնադրել դպրոց-ճեմարան՝ ըստ ամենայնի նպաստելով Հայաստանում գիտակրթական համակարգի զարգացմանը [9,10]:

Ա. Շիրակացու և Գ. Մագիստրոսի գործը շարունակում է 11-րդ դարի միջնադարի նշանավոր մտածող Հովհաննես Մարկավագ Իմաստասերը, որի շատ մեկաբանություններ և վարկածներ այսօր էլ չեն կորցրել գիտական նշանակությունը: Նա զարգացման նոր աստիճանի է հասցնում իր նախորդների բնագիտական-փիլիսոփայական հայացքները ճանաչողության պրոցեսի և ճշմարտության չափանիշի հարցում՝ կատարելով աննախադեպ ընդհանրացումներ՝ շեշտելով փորձի դերը տեսական ձևակերպումների համար: Նման ընկալում փորձի վերաբերյալ հանդիպում է անգլիացի փիլիսոփա Ռոջեր Բեկոնի մոտ երկու դար անց՝ այն էլ, Կ.Մարքսի բնութագրմամբ, որպես «միակ նշանակալից բացառություն» Արևմուտքում: Հովհաննես Իմաստասերի իմացաբանական ժառանգությունը հետագայում խորացրել են Հովհան Ռոտունեցին և Գրիգոր Տաթևացին: Այստեղ չի կարելի շրջանցել 13-րդ դարի մտածող Հովհաննես Երզնկացուն, որի համակողմանի մատենագիտական ժառանգությունը պարարտ հող է հանդիսացել Հայաստանի գիտակրթական համակարգի հետագա զարգացման համար [2, 3, 10, 11]:

Հայաստանում բնագիտության անբաժանելի մասն էր կազմում բժշկագիտությունը, որն ի սկզբանե բնաբուժության բնույթ է կրել: Հայտնի է, որ Ք. ա. 66 թվականին՝ հայոց Տիգրանակերտ քաղաքը գրավելու ժամանակ, հռոմեացիները գտնում են «Գաղտնիք դեղեաց» վերտառությամբ գիրք, որը որոշ հետազոտողների կարծիքով գրված է եղել հայերենով: Մեսպրոպյան գրային համակարգի ստեղծումից հետո՝ 6-8 դարերում, բժշկագիտական միտքը շարունակական զարգացում է ունեցել, որի մասին հիշատակություններ կան 9-10-րդ դարերի մատենագիտական ժառանգության մեջ: Այդ ժամանակներին է վերագրվում ամենավաղ մեզ հասած Գագիկ-Հեթումյան բժշկարանը: Այս ոլորտում արձանագրված բուռն վերելքը կապված է Կիլիկյան Հայաստանում Ներսես Շնորհալու լուսավորչական գործունեության հետ: Ի դեմս Մխիթար Հերացու, Ասար Մեքաստացու, Բունիաթ Մեքաստացու և այլոց՝ հիմնվել է հայրենի բժշկագիտական դպրոց [2,10,12]:

**Եզրահանգում:** Հոդվածում բերված են հասարակական և գիտակրթական իրողությունները, որոնք նախադրյալներ են հանդիսացել մաշտոցյան գրային կատարյալ համակարգի ստեղծման համար, և հակադարձաբար գիտակրթական համակարգի զարգացումն Հայաստանում անկարելի է պատկերացնել առանց ժամանակի

գիտական նվաճումների հետ անմիջական շփումների, որը կարող էր իրականացվել միայն գրային կատարյալ համակարգի ստեղծումով: Այսօրինակ ուսումնասիրությունը կարևորվում է նաև առկա գիտակրթական մարտահրավերներին դիմակայելու և խնդրո առարկա համակարգի բնականոն զարգացումն ապահովելու համար:

## **ПИСЬМА МАШТОЦА КАК ВАЖНОЕ УСЛОВИЕ РАЗВИТИЯ НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ**

**Урумян О. А., Петросян К. А., Петросян А. А., Саргсян М. С.**

Исследования подтвердили, что развитие научно-образовательной системы обусловлено культурой национального лингвистического мышления, которое опирается на систему письма. Подчеркивая решающую роль системы письма Маштоца в обеспечении беспрецедентного роста научно-образовательной системы Армении, подчеркивается существование домаштоцкой письменности и культуры, без которой невозможно представить литературный и научный прогресс в шлифованном языке Золотого века. На фоне развития научной мысли работа показывает, что последнее является необходимой предпосылкой для реалистичной оценки и нормального развития научно-образовательной системы Армении.

**Ключевые слова:** домаштоцкие письма, образование, Мовсес Хоренаци, Анания Ширакаци, Григор Магистрос, философ Ованес, натуральная медицина, медицина.

## **MASHTOTS LETTERS AS AN IMPORTANT PRECONDITION FOR THE DEVELOPMENT OF ARMENIAN SCIENTIFIC AND EDUCATIONAL SYSTEM**

**Urumyan H. H., Petrosyan K. A., Petrosyan A. A., Sargsyan M. S.**

Studies have confirmed that the development of the scientific-educational system is conditioned by the culture of national linguistic thinking, and the latter is anchored on the writing system. Emphasizing the crucial role of the Mashtots writing system in ensuring the unprecedented growth of the scientific-educational system of Armenia, the existence of the pre-Mashtots letters and culture is outlined, without which it is impossible to imagine the literary and scientific progress in the polished language of the



Golden Age. Against the background of the development of scientific thought, the work shows that the latter is a necessary precondition for the realistic assessment and normal development of the scientific-educational system of Armenia.

**Keywords:** pre-Mashtots letters, education, Movses Khorenatsi, Anania Shirakatsi, Grigor Magistros, Hovhannes the philosopher, natural medicine, medicine.

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ագաթանգեղոս Պատմություն հայոց: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1977: 192 էջ:
2. Անանիա Շիրակացի Մատենագրություն: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1979: 400 էջ:
3. Անթափյան Փ. Հովհաննես Սարկավազ Իմաստասեր: Երևան: ԵՊՀ հրատ.: 2001: 112 էջ:
4. Աղայան Է. Բ. Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին: Երևան: ԵՊՀ հրատ.: 1977: 268 էջ:
5. Դավիթ Անհաղթ Երկեր: Երևան: «Սովետական գրող» հրատ.: 1980: 328 էջ:
6. Կորյուն Վարք Մաշտոցի: Երևան: «Հայպետհրատ»: 1962: 179 էջ:
7. Մեսրոպ Մաշտոց Հոդվածների ժողովածու: Երևան: ՀԳԱ հրատ.: 1962: 306 էջ:
8. Մովսիսյան Ա. Ե. Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն: Երևան: «Զանգակ» հրատ.: 2021: 448 էջ:
9. Մովսիսյան Ա. Ե. Նախամաշտոցյան Հայաստանի նախամաշտոցյան գրային համակարգերը: Երևան: ԵՊՀ հրատ.: 2003: 400 էջ:
10. Չալոյան Վ. Կ. Հայկական ռենեսանս: Երևան: «Հայպետհրատ»: 1964: 355 էջ:
11. Պետրոսյան Գ. Բ. Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում: Երևան: ԵՊՀ հրատ.: 1959: 439 էջ:
12. Վարդանյան Ս. Ա. Հայաստանի բժշկության պատմություն: Երևան: «Քննասեր» հրատ: 2000: 440 էջ:

13. Потебня А. А. Эстетика и поэтика. Москва. Изд-во «Искусство». 1976. 614 с.

**Տեղեկություններ հեղինակների մասին**

**Ուրումյան Հ. Հ.**- տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ  
Էլ. փոստ՝ [hovhannes.urumyan@gmail.com](mailto:hovhannes.urumyan@gmail.com)

**Պետրոսյան Գ. Հ.**- քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Երևանի պետական համալսարան  
Էլ. փոստ՝ [petrosyankima@ysu.am](mailto:petrosyankima@ysu.am)

**Պետրոսյան Ա. Հ.**- ուսուցչուհի  
Մարալիկի թիվ 2 դպրոց  
Էլ. փոստ՝ [petrosyanashxen272@gmail.com](mailto:petrosyanashxen272@gmail.com)

**Մարգարյան Մ. Մ.**- ուսուցչուհի  
Երևանի Վազգեն Ա-ի անվան թիվ 168 դպրոց  
Էլ. փոստ՝ [Marsargsyan76@gmail.com](mailto:Marsargsyan76@gmail.com)

Տրվել է խմբագրություն՝ 06.10.2021  
Գրախուսվել է՝ 18.11.2021